DOI: 10.59560/18291155-2023.2-116

ԼԻԼԻԹ ՋԻՐՈՅԱՆ
Հայաստանի Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

Հաշվի առնելով համաշխարհային մասշտաբով բնապահպանական ճգնաժամերի ավելացումը, ավելի քան կարևոր է դառնում բնապահպանական նորմերի սահմանադրաիրավական ամրագրումը: Պետությունները պետք է ոչ միայն ամրագրեն, այլ նաև ստեղծեն բնապահպանական անվտանգության ապահովման համար կարևոր միջոցներ: Ուսումնասիրելով ժամանակակից մի շարք պետությունների սահմանադրություններ, տեսնում ենք, թե ինչպես են մանրակրկիտ ամրագրված ինչպես բնապահպանական անվտանգությունը՝ որպես պետության քաղաքականություն, այլ նաև մարդու էկոլոգիական իրավունքները՝ ընդգծելով դրանց առաջնային նշանակությունը: Վերլուծելով ՀՀ Սահմանադրությունը՝ տեսնում ենք բավականին լուրջ բացթողումներ, ինչպես բնապահպանական անվտանգության ամրագրման տեսանկյունից, այնպես էլ մարդու բնապահպանական իրավունքների տեսանկյունից: Ուստի, գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրությամբ հստակ պետք է սահմանվեն «բնապահպանական անվտանգությունը», ինչպես նաև անձի բնապահ-

պանական իրավունքները և իրավական մեխանիզմներ ու պայմաններ ամրագրվեն անձանց բնապահպանական իրավունքների իրականացման համար:

Հիմնաբառեր. բնապահպանական անվտանգություն, շրջակա միջավայր, սահմանադրություն, բնապահպանական նորմ, էկոլոգիական իրավունքներ, էկոլոգիական քաղաքականություն

Ներածություն

Հետազոտության նպատակն է բնապահպանական անվտանգության սահմանադրաիրավական կարգավորման հայեցակարգային հիմքերի համակարգային հետազոտությունը, Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական անվտանգության հիմնական սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրման, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովումը կարգավորող սահմանադրաիրավական նորմերի համեմատական, պատմաիրավական վերլուծության իրականացումը, իսկ հետազոտության խնդիրն է սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում հիմնական բացթողումների վերհանումն և բարեփոխմանն ուղղված առաջարկների ներկայացումը: **Հետազոտության օբյեկտ են** հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում մարդու և պետության բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտում հասարակական հարաբերությունները, իսկ **առարկան՝** Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական անվտանգության ապահովման ոլորտում իրավունքի նորմերը: Այսօր Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգության սահմանադրական հիմքերի հետազոտությունը կնպաստի էկոլոգիական ճգնաժամից երկրի դուրսբերման ադեկվատ ճանապարհների որոշմանը, **ինչն էլ հիմնավորում է հոդվածի արդիականությունը:**

Վերջին ժամանակաշրջանում շրջակա միջավայրի խնդիրներն սկսել են ավելի շատ անհանգստացնել մարդկությանը, գրանցվել են էկոլոգիական

ճգնաժամի տարատեսակ ցուցանիշեր ոչ միայն առանձին պետություններում, այլև ողջ երկրագնդի մասշտաբներով:

Սահմանադրական պետության հասկացությունը լցվել է նոր իմաստով, ժամանակակից սահմանադրական պետության մոդելը կարող է աստիճանաբար ընդլայնվել՝ չհանդիսանալով ընդմիշտ նախանշված և կոնսերվատիվ: Ավելին, պետությունների սահմանադրությունները պետք է հասարակության զարգացման հետ մեկտեղ փոփոխություններ կրեն՝ կապված նոր գլոբալ խնդիրների առաջացման հետ: Այսօր հասարակության և բնության փոխազդեցությունն այնքան ամուր է, որ հասարակության հասցրած վնասը, միևնույն ժամանակ վնաս է շրջակա միջավայրին: Իր հերթին վնասը, որը մարդը հասցնում է բնությանը, վերջին հաշվով հասցնում է հասարակությանը[1]:

Ամենաընդհանուր ձևով անձի սահմանադրական և իրավական կարգավիճակը կարող է սահմանվել, որպես անհատի իրավաբանորեն ամրագրված դիրք պետական կազմակերպված հասարակությունում: Սա բարդ կատեգորիա է, որն արտացոլում է անհատի, հասարակության և պետության հարաբերությունները: Այս կարգավիճակը մեծապես որոշվում է երկրի սահմանադրությամբ սահմանված սկզբունքների, իրավունքների, ազատությունների, պարտականությունների, երաշխիքների համակարգով, որոնք երաշխավորվում և տրամադրվում են պետության կողմից, որոնց համաձայն անհատը՝ որպես իրավունքի սուբյեկտ, որոշում է իր վարքագիծը պետության և հասարակության մեջ[2]:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից մի քանի տարի անց՝ 1995թ. հուլիսի 5 –ին, ընդունվեց ՀՀ սահմանադրությունը:

Անկախության հռչակումը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լայն հնարավորություններ էր ընձեռում երկրի ներսում լուրջ փոփոխությունների և այլ պետությունների համագործակցության արդյուն-

[1] Տե՛ս **Крассов О.И.** Экологическое право. – Москва: “Норма, Инфра-М”, 2023. - С. 13.

[2] Տե՛ս **Караманукян Д.Т. и др**. Отв. ред. и авт. предисл. Караманукян Д.Т. Права человека в России: история, теория и практика. – Омск: Омская юридическая академия, 2015. - С. 54.

քում շարժվել էկոլոգիական կայուն օրենսդրություն ստեղծելու, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության, կյանքի որակի բարձրացման ճանապարհով[1]:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածում նշված էր. «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը[2]»: Երկրորդ գլխում, որն ուներ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությունը, որևէ անդրադարձ չկար մարդու և քաղաքացու էկոլոգիական իրավունքներին, ինչը բավականին լուրջ բացթողում էր մարդու իրավունքների տեսանկյունից: Այնուհանդերձ, ամրագրվեց պետության էկոլոգիական գործառույթը, դրանով իսկ սահմանվեցին պետության համար պարտականություններ վերոհիշյալ բնագավառում:

Հետագայում՝ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում, առաջին անգամ երկրի հիմնական օրենքում սահմանվեց «բնապահպանական անվտանգություն» տերմինը:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածում ամրագրված էր. «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

…

10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն[3]»: Ինչպես նաև 33.2–րդ հոդվածում ամրագրված էր. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ եւ այլոց հետ համատեղ պահպանել եւ բարելավել շրջակա միջավայրը:

[1] Տե՛ս **Իսկոյան Ա.Բ., Գեղամյան Օ.Մ., Գրիգորյան Հ.Ս.,** Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, «Հայրապետ», 2020 թ., էջ 97:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 05.07.1995 թ):

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (27.11.2005 թ. փոփոխություններով):

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»: Իսկ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում էր, որ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը եւ վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Սահմանադրությամբ ամրագրվեց ինչպես մարդու կարևոր իրավունքներից մեկը, այլ նաև, որպես պետության կարևոր խնդիր էր դիտարկվում բնապահպանական անվտանգություն ապահովող քաղաքականության իրականացումը: Սահմանադրորեն ամրագրելով պատասխանատվությունը պաշտոնատար անձանց կողմից բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ մերժելու համար՝ մեծ քայլ էր կատարվում ապահովելու Օրհուսի կոնվենցիայի[1] դրույթների ավելի ինտենսիվ իրագործման, ներպետական սահմանադրական հիմքերը ապահովելու համար:

Այժմ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածում նշված է. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»[2]:

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով ամրագրվեց տեղեկություններ ստանալու իրավունքը:

Կայուն զարգացման ամրագրումը սահմանադրորեն շատ կարևոր քայլ էր՝ հաշվի առնելով կայուն զարգացման նպատակների կարևորությունը[1]:

[1] Տե՛ս CONVENTION ON ACCESS TO INFORMATION, PUBLIC PARTICIPATION IN DECISION-MAKING AND ACCESS TO JUSTICE IN ENVIRONMENTAL MATTERS done at Aarhus, Denmark, on 25 June 1998:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (06.12.2015 թ. փոփոխություններով):

Սակայն պետության քաղաքականության հիմնական նպատակների շարքում լիովին բացակայում է բնապահպանական անվտանգության ապահովումը: «Խթանել» բառն ինքնին պարտավորեցնող չէ, ինչն էլ նվազեցնում է պետության ակտիվ գործունեությունը շրջակա միջավայրի պահանության ոլորտում: Իսկ ինչ վերաբերում է տեղեկատվություն ստանալու իրավունքին, այստեղ ներառված չէ «բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ տրամադրումը մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության մասին» :

«Բնապահպանական անվտանգությունը»՝ որպես ոչ կենցաղային ծագման իրավական կատեգորիա. առաջին անգամ այս տերմինը հայտնվեց միջազգային հարաբերություններում 1980–ական թվականներին, որտեղ բնապահպանական անվտանգությունը դիտվում էր որպես խաղաղության և համաշխարհային անվտանգության ապահովման գործոն: 1984 թ.-ին UNEP-ի Կառավարման խորհրդի 12-րդ նիստում այս կազմակերպության գործադիր տնօրենն իր եզրափակիչ ելույթում մատնանշեց մի կողմից բնապահպանական խնդիրների, մյուս կողմից՝ ազգային և միջազգային անվտանգության կապը: Նա նշեց, որ համաշխարհային անվտանգությունը սննդամթերք, անդրսահմանային աղտոտվածություն և նույնիսկ զինված հակամարտություններ, ինչպես նաև ժամանակակից սոցիալական և տնտեսական զարգացման գործողություններ, որոնք կարող են հանգեցնել կարևոր բնական ռեսուրսների սակավության և աղտոտման, որն իր հերթին կարող է միջազգային բախումներ առաջացնել: 1987 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Միջազգային խաղաղության և անվտանգության համապարփակ համակարգ» 42/93 բանաձևը, որն ընդգծում էր, որ ընդհանուր և համապարփակ անվտանգությունը պահանջում է առանց բացառության միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցների համատեղ ջանքերը. և միջազգային անվտանգության ու հարակից ոլորտների համար կարևոր է

[1] Տե՛ս https://www.un.org/sustainabledevelopment/development-agenda/

նաև շրջակա միջավայրի պահպանումը: 10-րդ կետում նշվում է, որ «բնապահպանական համագործակցությունը պետք է դառնա համապարփակ միջազգային անվտանգության անբաժանելի մասը»:

Համաշխարհային, միջազգային համագործակցությունն այս դիտարկվող ոլորտում չպետք է հակադրվի տարածաշրջանային, երկկողմանի և որևէ այլ, նաև ներպետական համապատասխան ներքին միջոցառումներին: Սրանք բոլորը համակարգային հարաբերություններ են մեկ ընդհանուր առաջադրանքի շրջանակներում՝ ապահովելու ամբողջ մարդկության բնապահպանական անվտանգությունը, հետևաբար գնալով ավելի է շեշտադրվում բոլոր պետությունների կողմից վերոհիշյալ պարտականությունների ընդունումը՝ ի նպաստ աշխարհի[1]:

Ուսումնասիրելով ժամանակակից մի շարք պետությունների սահմանադրություններ, թիրախավորելով բնապահպանական անվտանգության և շրջակա միջավայրի վերաբերյալ դրույթների վերլուծությունը՝ տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը վերոհիշյալ ոլորտում բավականին հետընթաց է գրանցել, որը, կարծում ենք, հետագա փոփոխությունների ժամանակ պարտադիր պետք է ուշադրության արժանանա:

ՌԴ Սահմանադրությունն ուսումնասիրելիս հարկ է արձանագրել, որ այն պարունակում է շրջակա բնական միջավայրի ոլորտում հարաբերությունները կարգավորող նախկինում չգրանցված նորմեր: Այնտեղ առաջին անգամ ամրագրված են բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների իրավունքները, մտցվում է «բնապահպանական անվտանգություն» տերմինը: Սակայն որոշ այլ պետությունների սահմանադրություններում «բնապահպանական անվտանգություն» հասկացությունն ավելի մանրամասն է ներկայացված, քան ռուսականում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում բնապահ-

[1] Տե՛ս **Валеев Р.М.** Международное экологическое право: учебник. - М.: “Статут”, 2012. - С. 22.

պանական անվտանգության ապահովումն իրականացվում է սահմանադրական երաշխիքների օգնությամբ, որոնք ուղղված են բնության պահպանությանը և բնական ռեսուրսների ավելի ռացիոնալ օգտագործմանը: Ռուսաստանի Սահմանադրության մեջ ավելի մանրամասն նկարագրված են քաղաքացու էկոլոգիական իրավունքները, ուստի հարկավոր է համաձայնվել Ս.Ա. Բոգոլյուբովի և Օ.Ս. Կոլբասովի այն պնդման հետ, որ «...պետության էկոլոգիական գործունեության մեջ, պետության էկոլոգիական գործունության խթանման մեխանիզմում այն հանդիսանում է յուրաքանչյուրի բնապահպանական գործունեության նպատակ և այդ գործունեության արդյունավետության չափանիշ»[1]: Նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 42-րդ հոդվածը հանդիսանում է մարդու և քաղաքացու բնապահպանական անվտանգության իրավական ֆունդամենտ: Այնտեղ կարելի է ընդգծել երեք փոխկապակցված իրավունք.

- բարենպաստ շրջակա միջավայրի,
- դրա վիճակի մասին ճշգրիտ տեղեկատվության,
- էկոլոգիական իրավախախտմամբ քաղաքացու առողջությանը կամ սեփականությանը հասցված վնասի փոխհատուցման[2]:

Լեհաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված է. «Լեհական Հանրապետությունը պաշտպանում է իր անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ապահովում է մարդու և քաղաքացու ազատությունները և իրավունքները, ինչպես նաև քաղաքացիների անվտանգությունը, պաշտպանում է ազգային ժառանգությունը, ինչպես նաև ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը՝ առաջնորդվելով հավասարակշռված զարգացման սկզբունքով»:

[1] Տե՛ս **Боголюбов. С.А., Колбасов О.С.** Закон об охране природы в СССР. Каким ему быть. Мнения и предложения ученых. - М., 1991. - С. 26:

[2] Տե՛ս ՌԴ Սահմանադրություն (ընդունված 12.12.1993 թ.):

74-րդ հոդվածում ամրագրված է նաև, որ «Հանրային իշխանություններն իրականացնում են արդի և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն:

2. Շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է հանրային իշխանությունների պարտականությունը:

3. Ամեն ոք ունի շրջակա միջավայրի վիճակի և պահպանության մասին տեղեկատվություն ունենալու իրավունք:

4. Հանրային իշխանություններն աջակցում են շրջակա միջավայրի պահպանությանն ու վիճակի բարելավմանն ուղղված քաղաքացիների գործողություններին»:

86-րդ հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի վիճակի մասին և պատասխանատվություն է կրում պատճառած վնասի համար: Այդ պատասխանատվության սկզբունքները որոշվում են օրենքով»[1]: Լեհաստանի սահմանադրությունը համապարփակ անդրադառնում է ինչպես վերոհիշյալ ոլորտում մարդու իրավունքներին, այլ նաև բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությանը, տեղեկություն ստանալու իրավունքին, ինչպես նաև հասցված վնասի փոխհատուցմանը:

Ռումինիայի Սահմանադրության 134-րդ հոդվածում թվարկվում են, որ պետությունը պարտավոր է ապահովել.

- Ազգային շահերին համապատասխան բնական ռեսուրսների էքսպլուատացիա,
- Շրջակա միջավայրի վերականգնում և պահպանություն, ինչպես նաև էկոլոգիական հավասարակշռության պահպանում»[2]:

Հունաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, մասնավորապես 24-րդ հոդվածում նշվում է, որ «Շրջակա և մշակութային միջավայրի պահպանությունը հանդիսանում է պետության պարտակա-

[1] Տե՛ս Լեհաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 02.04. 1997 թ.):
[2] Տե՛ս Ռումինիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 21.11. 1991 թ.):

նությունը: Պետությունը պարտավորվում է նրա պաշտանության համար ձեռնարկել հատուկ կանխարգելիչ կամ ռեպրեսիվ միջոցներ: Օրենքը սահմանում է անտառների և անտառային տարածքների պահպանության հետ կապված հարցեր:

Արգելվում է փոփոխել պետությանը պատկանող անտառների և անտառածածկ տարածքների օգտագործման կարգը, բացառությամբ ազգային տնտեսության շահերի և պետության այլ նպատակների համար դրանց գյուղատնտեսական օգտագործման»[1]:

Էկոլոգիական պահանջներ և նորմեր այս կամ այն տեսքով հաճախ կարելի է հանդիպել Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրություններում: Այսպես, օրինակ՝ Չեխիայի Հանրապետության Սահմանադրության երկրորդ գլխում «Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ» 35-րդ հոդվածում գրված է, որ.

- «Յուրաքանչյուր ոք ունի բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք:
- Յուրաքանչյուր ոք ունի շրջակա միջավայրի և բնական հարստությունների վիճակի մասին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն ստանալու իրավունք:
- Ոչ ոք իր իրավունքներն իրացնելիս չի կարող օրենքով սահմանված նորմերից գերազանցող վտանգ ստեղծել կամ վնաս պատճառել շրջակա միջավայրին, բնական ռեսուրսներին, կենդանական և բուսական տեսակների բազմազանությանը և մշակույթի հուշարձաններին» [2]:

Վրաստանի Սահմանադրության մեջ կարևոր նշանակություն ունի ամրագրված 37-րդ հոդվածը, որի համաձայն՝ «բոլորն իրավունք ունեն ապրելու կյանքի համար անվտանգ շրջակա միջավայրում, օգտվել բնական և մշակութային միջավայրից, բոլորը պարտավոր են պահպանել բնական և մշակութային միջավայրը: Մարդկանց առողջության համար

[1] Տե՛ս Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 11.06.1975 թ.):
[2] Տե՛ս Չեխիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 16.12.1992 թ.):

անվտանգ միջավայր ստեղծելու համար՝ հասարակության բնապահպանական և տնտեսական շահերին համապատասխան, ներկա և ապագա սերունդների շահերից ելնելով, պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Անձն իրավունք ունի ստանալ ամբողջական, օբյեկտիվ և ժամանակին տեղեկատվություն իր միջավայրի վիճակի և աշխատանքային պայմաններ մասին»[1]:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում շրջակա միջավայրի ոլորտում քաղաքացիների իրավունքների ամրագրումն աշխարհի հնագույն սահմանադրություններից մեկում՝ ԱՄՆ-ի Սահմանադրությունում: Ինչպես հայտնի է, այնտեղ բացակայում է քաղաքացիների նմանատիպ իրավունքների հիշատակումը, սակայն իրավունքի ամերիկյան համակարգի յուրահատկությունը կայանում է նրանում, որ դատարաններն ի հայտ են բերում այն ԱՄՆ-ի Սահմանադրության 5-րդ, 14-րդ և 9-րդ փոփոխությունների մեկնաբանման ճանապարհով, որոնցից առաջին երկուսը դնում են «քաղաքացիներին առանց դատական վարույթի կյանքից, ազատությունից և սեփականությունից (ունեցվածքից)» զրկելու արգելք: Կյանքի և ազատության իրավունքը ներառում է նաև մարդու բնական շահերի պաշտպանության իրավունքը: Պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով շրջակա միջավայրի որակի վատթարացումը դատարանների կողմից ճանաչվում է է որպես քաղաքացիների այդ իրավունքի խախտում: Ուստի, դատական պրակտիկան ելնում է նրանից, որ բարենպաստ բնական պայմաններում ապրելու իրավունքի 9-րդ փոփոխությամբ ենթադրվող քաղաքացիական իրավունքների և ազատությունների ցանկում ընդգրկումը ողջամիտ է և անհրաժեշտ[2]:

[1] Տե՛ս Վրաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 24.08.1995 թ.):
[2] Տե՛ս **Краснова И.О.** Экологическое право и управление в США. - М., 1992. - С. 40-41:

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի իրացումն անհնար է առանց դրա վիճակի մասին ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու իրավունքի ապահովման: Սակայն պաշտպանության և անվտանգության ռազմավարական շահերը թույլ չեն տալիս տրամադրել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Սահմանադրության էությունը կայանում է ոչ միայն նրանում, որ այն պետության հիմնական օրենքն է և ունի ամենաբարձր իրավական ուժը, թեև դա նրա առաջին և կարևոր նպատակն է: Սահմանադրությունը նաև քաղաքական և գաղափարական փաստաթուղթ է, և որպես քաղաքական փաստաթուղթ այն արտացոլում է քաղաքական ուժերի որոշակի հավասարակշռություն մշակման և ընդունման պահին: Ձեռք բերված հարաբերակցությունը կարող է լինել ակտիվ (երբեմն հեղափոխական) պայքարի արդյունք, իսկ ժողովրդավարական պետությունում՝ հասարակության մեջ քաղաքական ներդաշնակության արդյունք: Բայց ամեն դեպքում, սահմանադրությունը հանրային փոխզիջում է, որում համակարգվում են քաղաքական շահերը, որոնք ներկայացնում են տարբեր քաղաքական ուժեր: Նրանց շահերն արտացոլված են սահմանադրության մեջ այնքանով, որքանով պաշտպանվել և համակարգվել են այլ քաղաքական ուժերի հետ: Իհարկե, ավելի շատ հաշվի են առնվում այն քաղաքական ուժերի շահերը, որոնց ազդեցությունը հասարակության մեջ ավելի ուժեղ կամ նույնիսկ որոշիչ է դարձել[1]:

Սահմանադրական նորմերը մի կողմից բավական կարևոր դեր են խաղում ներպետական հարաբերությունների մեխանիզմում, մյուս կողմից՝ ստեղծում իրավական հիմք քաղաքացու կողմից իրավունքի միջազգային պաշտպանության միջոցների օգտագործման համար: Մարդու իրավունքները հանդիսանում են սահմանադրական իրավունքի կարևորագույն ինստիտուտը: Այն հատուկ զարգացում է ստացել ինչպես ներպետական,

[1] Տե՛ս **Алжеев И.А., Власенко И.Б., Догадайло Е.Ю. и др.** Отв. ред. Носов С.И. - М.: Статут, 2014. - С.12:

այնպես էլ միջազգային իրավունքի ոլորտում 20-րդ դարի երկրորդ կեսին, ինչը հանդիսացավ մարդկության իրավական զարգացման առավել նշանակալից արդյունքներից մեկը: Հանդիսանալով ժամանակակից միջազգային ստանդարտներին պետության քաղաքական և իրավական համակարգի համապատասխանության ցուցանիշը՝ այն կոչված է ապահովելու անձի արժանապատիվ և անվտանգ կյանքը, ժամանակակից հասարակության դժվարին պայմաններում նրա ազատ կենսագործունեության հնարավորությունը:

Պետությունների սահմանադրություններում ամրագրված հիմնական իրավունքները հիմնվում են մարդու իրավունքների վրա, իրենց մեջ ներառում են դրանցում առկա բնահիրավական սկզբունքները: Պետաիրավական ճանաչումը և երաշխավորվածությունը մեծ առաջընթաց են նշանակում մարդու իրավունքների պաշտպանության առումով:

Մարդու էկոլոգիական իրավունքների տակ հասկանում ենք անհատի ճանաչված և օրենդրությամբ ամրագրված իրավունքները, որոնք ապահովում են բնության հետ հարաբերվելիս մարդու զանազան պահանջների բավարարումը:

Մարդու հիմնական իրավունքները Հայաստանի Հանրապետությունում ամրագրված են Սահմանադրության մեջ, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերում[1]:

Իրավունքների ճանաչումը բարձրացնում է քաղաքացիների իրավագիտակցությունը, բնապահպանական գիտակցությունը և մշակույթը, պետության գործունեությունը այս ոլորտում, քանի որ ինչպես բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի, այնպես էլ բնապահպանական այլ իրավունքների իրացումը ենթադրում է այլ սուբյեկտներից համապատասխան վարքագիծ պահանջելու հնարավորություն: Առաջին հերթին՝

[1] Մասնավորապես դրանք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950 թ.), Եվրոպական սոցիալական խարտիա (1996 թ.) և այլն:

պետական մարմիններից, ինչպես նաև նպաստում է քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործում[1]:

Եզրակացություն

Անհրաժեշտ է նշել, որ էկոլոգիապես վտանգավոր իրավիճակը բնորոշվում է անտրոպոգեն և բնական ներգործությունների ազդեցությամբ շրջակա միջավայրի վիճակի զգալի բացասական փոփոխության առկայությամբ: Ուստի արդի պայմաններում առաջին տեղ պետք է դրվի ոչ թե ուղղակի շրջակա միջավայրի պահպանության խնդիրը, այլև՝ գործունեության բնապահպանական անվտանգության ապահովման, որն արտացոլում է էկոլոգիական խնդրի ժամանակակից յուրահատկությունը՝ անձի, հասարակության, պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանություն: Բնապահպանական անվտանգության համակարգի ստեղծումը պահանջում է առանձին, ավելի մշակված իրավական և քաղաքական կարգավորում: Կասկածից վեր է, որ հենց այսօր Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգության սահմանադրական հիմքերի հետազոտությունը կնպաստի էկոլոգիական ճգնաժամից երկրի դուրսբերման ադեկվատ ճանապարհների որոշմանը:

Ուստի գտնում ենք, որ «բնապահպանական անվտանգություն» եզրույթը պետք է ամրագրվի ՀՀ իրավական համակարգում և պետք է առաջնային ձեւով իր ամրագրումը ստանա ՀՀ Սահմանադրությամբ: «Բնապահպանական անվտանգության» ամրագրումը «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում առավել քան կարևոր է՝ հաշվի առնելով այդ գլխի հատուկ իրավաբանական ուժը Սահմանադրության ներսում, ինչպես նաև այլ նորմերի մեկնաբանման համատեքստում:

Առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Պետությունն **ապահովում է**

[1] Տե՛ս **Саркисов О.Р., Любарский Е.Л.** Экологическое право. - Казань, 2014 г. - С. 82:

շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև՝ **ապահովելով բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»:**

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 05.07.1995 թ.):
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (27.11.2005 թ. փոփոխություններով):
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (06.12.2015 թ. փոփոխություններով):
4. Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 11.06.1975 թ.):
5. Չեխիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 16.12.1992 թ.):
6. Վրաստանի Սահմանադրություն (ընդունված 24.08.1995 թ.):
7. ՌԴ Սահմանադրություն (ընդունված 12.12.1993 թ.):
8. Լեհաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 02.04.1997 թ.):
9. Ռումինիայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 21.11.1991 թ.):
10. CONVENTION ON ACCESS TO INFORMATION, PUBLIC PARTICIPATION IN DECISION-MAKING AND ACCESS TO JUSTICE IN ENVIRONMENTAL MATTERS done at Aarhus, Denmark, on 25 June 1998.

11. **Իսկոյան Ա.Բ., Գեղամյան Օ.Մ., Գրիգորյան Հ.Ս.,** Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք, ընդհանուր մաս: Երևան, «Հայրապետ», 2020 թ.:

12. **Крассов О.И.** Экологическое право. – Москва: “Норма: Инфра-М”, 2023.

13. **Караманукян Д.Т. и др.** Отв. ред. и авт. предисл. Караманукян Д.Т. Права человека в России: история, теория и практика. – Омск: Омская юридическая академия, 2015.

14. **Валеев Р.М.** Международное экологическое право: учебник - М.: “Статут”, 2012.

15. **Боголюбов С.А., Колбасов О.С.** Закон об охране природы в СССР. Каким ему быть. Мнения и предложения ученых. - М., 1991.

16. **Алжеев И.А., Власенко И.Б., Догадайло Е.Ю. и др.** Отв. ред. Носов С.И. - М.: Статут, 2014.

17. **Краснова И.О.** Экологическое право и управление в США. - М., 1992.

18. **Саркисов О.Р., Любарский Е.Л.** Экологическое право. - Казань, 2014.

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ЭКОЛОГИЧЕСКИХ НОРМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

Аннотация

В связи с ростом экологических кризисов в глобальном масштабе все большее значение приобретает конституционно-правовое закрепление экологических норм, государства должны не только закреплять, но и создавать важные средства обеспечения экологической безопасности. Изучая конституции ряда современных государств, мы видим, как четко

определяется экологическая безопасность как государственная политика, а также экологические права человека, подчеркивая их первостепенное значение. Анализируя Конституцию РА, мы видим достаточно серьезные пробелы как с точки зрения закрепления экологической безопасности, так и с точки зрения экологических прав человека. Поэтому мы считаем, что Конституция РА должна четко определить «экологическую безопасность», а также экологические права человека и установить правовые механизмы и условия для реализации экологических прав человека.

Ключевые слова: экологическая безопасность, окружающая среда, конституция, экологическая норма, экологические права, экологическая политика.

CONSTITUTIONAL AND LEGAL REGULATION OF ENVIRONMENTAL NORMS IN THE REPUBLIC OF ARMENIA. COMPARATIVE-LEGAL ANALYSIS

Annotation

Taking into account the increase of environmental crises on a global scale, the constitutional and legal fixing of environmental norms becomes more important. States should not only fix, but also create important means for ensuring environmental security. Studying the constitutions of a number of modern states, we see how environmental security as a state policy, as well as human ecological rights, are carefully defined, emphasizing their primary importance. Analyzing the RA Border, we see quite serious gaps, both from the point of view of fixing environmental security, and from the point of view of human environmental rights. Therefore, we believe that "environmental

security" should be clearly defined by the RA Constitution, as well as the environmental rights of a person and legal mechanisms and conditions should be established for the realization of the environmental rights of persons.

Keywords: environmental security, environment, constitution, environmental norm, environmental rights, ecological policy.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 06.06.2023թ., տրվել է գրախոսության 06.06.2023թ., ընդունվել է տպագրության 07.06.2023թ.: